

Սիւնեաց բարձրագաւառէն բարձրացուց բազուկը նորոգելու Եկեղեցին ի գլուխն եւ յամս :

Հաստատուեցան քրիստոնէական կարգերը երկրին մէջ, գտաւ եկեղեցին իւր հեղինակութիւնը, լեռներն ու դաշտերը, հովիտներն ու անապատները կանանչացան, ծաղկեցան եւ պողարեր եղան :

2. ԱՂԲԻԻՐՆԵՐ

Աղեքսանդր կաթողիկոս ակնարկութիւններ ընելով Մովսէս կաթողիկոսի կեանքի եւ գործունէութեան վրայ՝ կը գրէ . «որպէս գիտողացն է քաջայայտ ի Լիակատար պատմութենէ իւրմէ ¹» : Այս գրութիւնը առանց տարակուսի Առաքել Դաւրիժեցւոյ Պատմութեան ԻԴ. գլուխը կ'ենթադրէ, որ ընդարձակօրէն կը ճառուի «վասն վարդապետութեան եւ կաթողիկոսութեան տեառն Մովսէսի ²» :

Առաքել Դաւրիժեցի իւր տեղեկութիւնները հաւաքած է գրաւոր եւ բերանացի աւանդութիւններէ . ունեցած է աչքի առաջ ձեռագրական Յիշատակարաններ . ասոնց թուին մէջ յիշատակութեան արժանի է Ղուկաս Գառնեցւոյ Յիշատակարանը 1631էն, ուր, ինչպէս կը գրէ Գառնեցի, «աստանօր կամիմ, կ'ըսէ,

¹ Ազգասէր Արարատեան, 1849, Բ. 12, էջ 92 :

² Հրտ. Վաղարշապատ 1896, էջ 284—313 :